ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ Է ՀՂԵԼ ՍԻՐԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 13 հունիսի 2000 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական հեռագիր է հղել Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Հաֆեզ Ասադի մահվան կապակցությամբ:

«Խոր վշտով և աղոթքով առ Ամենազոր Աստված՝ Սիրիայի ժողովրդի հետ մեկտեղ սգում ենք մեծ առաջնորդ, նվիրյալ նախագահ և հայ ժողովրդի սիրելյալ բարեկամ Հաֆեզ էլ Ասադի մահը»,- ասվում է Վեհափառ Հայրապետի հեռագրում:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՆՁԵՐԸ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 22 հունիսի 2000 թ.:

Այսօր Սանկտ Պետերբուրգում, Էրմիտաժի Ձմեռային պալատի Ալեքսանդրովյան սրահում, բացվեց «Հայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700 և Սանկտ Պետերբուրգի Ս. Կատերինա հայկական եկեղեցու 290-ամյակներին:

Ինչպես նախորդ տարիներին Մոսկվայի Կրեմլում, Աթենքում, Հելսինկիում և Վատիկանում կայացած նմանատիպ ցուցահանդեսների, այս անգամ ևս Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում է Հայ Առաքելական Եկեղեցուն և համայն քրիստոնեությանը հոգեհարազատ սրբություններ, ինչպես նաև Հայ Եկեղեցում գործածվող ծիսա-պաշտամունքային նշանակություն ունեցող առարկաներ՝ հայկական արծաթագործության, ասեղնագործության գլուխգործոցներ:

Մայր Աթոռի կողմից ներկայացված շուրջ 70 ցուցանմուշների կողքին պետերբուրգյան ցուցահանդեսում կներկայացվեն նաև Հայ Եկեղեցուն առնչվող այլ մասունքներ Էրմիտաժից՝ Սկևռայի մասնատուփը և երկու հուշաքար:

Ցուցահանդեսը կշարունակվի մինչև օգոստոսի 27-ը: